ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «08» հուլիսի 2019թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲ բաժնի գլխավոր մասնագետ, Վ. Մելքոնյան,
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Բանակցությունների անցկացման վերաբերյալ
2. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

1. Բանակցությունների անցկացման վերաբերյալ

(Ա. Մաղաքյան)

1.1 **08.07.2019թ. ժամը 12:00** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ կազմակերպված բանակցությանը որևէ մասնակից չներկայացավ, ուստի 1-ին և 37-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից առաջարկված գները թողնվեցին առանց փոփոխության: Հաշվի առնելով նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը ***1-ին և 37-րդ չափաբաժինների*** մասով հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

1.2 ***Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի*** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 4-րդ, 5-րդ, 23-րդ և 35-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ֆոտոն ՍՊԸ»-ն, 17-րդ չափաբաժնի մասով «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն:

1.3 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

1.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներիի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, քանի որ նշված մասնակիցների մասով սույն ընթացակարգի շրջանակներում արդեն իսկ հարցում կատարվել էր:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Մուրադյան
Գնահատող		Ա. Պապյան
Գնահատող		Վ. Մելքոնյան
Հանձնաժողովի քարտուղար		Ա. Մաղաքյան